# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

**<<Ծաղկաձորի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> ՀՈԱԿ-ը** ստորև ներկայացնում է իր կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված **<<ԾՆՈՒՀ-ԳՀԱՊՁԲ-21/1>>** ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում **2021 թվականի հունվարի 27-ին** կնքված N **<<ԾՆՈՒՀ-ԳՀԱՊՁԲ-21/1-2>>** պայմանագրում **2021 թվականի փետրվարի 01-ին** կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ: Պայմանագրով սահմանվել է, որ ապրանքների մատակարարումն իրականացվելու է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու և կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքվելու դեպքում:

Փոփոխության նկարագրություն: Ապրանքների մատակարարումն իրականացվելու նպատակով նախատեսվել են համապատասխան ֆինանսական միջոցներ և կողմերի միջև կնքվել է համապատասխան համաձայնագիր:

Փոփոխության հիմնավորում: Համապատասխան ֆինանսական միջոցների առկայություն, Պայմանագրի 8.5 և 8.15 կետեր :

***Պատվիրատու՝*** **<<Ծաղկաձորի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> ՀՈԱԿ**

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԹԻՎ 1

## 27 ՀՈՒՆՎԱՐ 2021Թ. ԿՆՔՎԱԾ N «ԾՆՈՒՀ-ԳՀԱՊՁԲ-21/1-2»

## ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ք. Ծաղկաձոր «01» փետրվար 2021թ.

<<Ծաղկաձորի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> ՀՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն Ա.Ասատրյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և <<ՀԵԼԹԻ ՖՈՒԴ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ.Մկրտչյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով 27.01.2021թ. կնքված N <<ԾՆՈՒՀ-ԳՀԱՊՁԲ-21/1-2>> գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5-րդ և 8.15-րդ կետերը և այն հանգամանքը, որ փոփոխությունը չի դասվում ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 56-րդ կետով սահմանված արհեստական փոփոխությունների շարքին, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին£

### 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կողմերը որոշեցին՝

1.1 Հաստատել ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն կից հավելվածի (կցվում է):

1.2 Սահմանել, որ Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ կից վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիսներին:

### 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ կողմերի գնման պայմանգրով նախատեսված մյուս կետերը մնում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով : Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն համաձայնագիրը և հավելվածը կնքված են հայերեն լեզվով , 2 օրինակից , որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

**ԳՆՈՐԴ**

**<<Ծաղկաձորի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> ՀՈԱԿ**
Հասցե՝ ք.Ծաղկաձոր, Խ.Կեչառեցու 85
ՀՎՀՀ 03008231
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
ՀՀ 1510003052690100
Տնօրեն Ա.Ասատրյան

/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

<<ՀԵԼԹԻ ՖՈՒԴ>> ՍՊԸ
ք. Եղվարդ, Երևանյան 2
ԱՐԴՇԻՆԲԱՆԿ ՓԲԸ
ՀՎՀՀ 03316086
Հ/Հ 2473702151440000
Տնօրեն Հ.Մկրտչյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«27» հունվար 2021թ. կնքված
«ԾՆՈՒՀ ԳՀԱՊՁԲ 21-1-2» ծածկագրով պայմանագրում փոփոխություններ
կատարելու նպատակով <<01>> փետրվար 2021թ. կնքված համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 2,3,5,6,7,8,12,13,14,17,18,19,21,23,25,27,28,32,33,34,36-43 | 15000000 | Մանրամթերք | Վճարումներն իրականացվելու են Պայմանագրի գործողության շրջանականերում, յուրաքանչյուր ամսվա մինչև 20-րդ բանկային օրը, նախորդ ամսվա ընթացքում փաստացի մատակարարված ապրանքների 100%-ի չափով՝ Վաճառողի կողմից հաստատված և ներկայացված հաշիվ-ապրանքագրերի և հաստատված ընդունման-հանձնման արձանագրությունների հիման վրա: | | | | | | | | | | | | |

**ԳՆՈՐԴ**
<<Ծաղկաձորի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> ՀՈԱԿ
Հասցե՝ ք.Ծաղկաձոր, Խ.Կեչառեցու 85
ՀՎՀՀ 03008231
ԱԲՍԲԱՆԿ ԲԲԸ
Հ/Հ 15100030526901000
Տնօրեն Ս.Ասատրյան
/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
<<ՀԵԼԹԻ ՖՈՒԴ>> ՍՊԸ
ք. Եղվարդ, Երևանյան 2
ԱՐԴՇԻՆԲԱՆԿ ՓԲԸ
ՀՎՀՀ 03316086
Հ/Հ 2473702151440000
Տնօրեն Հ.Մկրտչյան
/ստորագրություն/
Կ.Տ